

ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Մ. Յու. Լերմոնտովի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Ս. Հ. ԳՒՆԻՆԵՎՍԿԻՆ

Մ. Յու. Լերմոնտովի բանաստեղծություններին նվիրված իր հոգվածնե-
րից մեկում ռուս մեծ քննադատ Բելինսկին գրել է. «Հեռու չէ այն ժամանակը,
երբ զրականության մեջ նրա անունը կդառնա ժողովրդական անուն և նրա
պոեզիայի ներդաշնակ ձայները լսելի կլինեն ժողովրդի առօրյա զրույցներում,
նրա ամենօրյա հոգսերի պահին»։ Լերմոնտովի ծննդյան 150-ամյակը, որը
իրրև ռուս զրականության փառատուն նշվեց բոլոր աշխարհամասերում, Բելին-
սկու այդ մարդարեական կանխագուշակության լավագույն հավաստումն է,
բանաստեղծի վաստակած լայն ժողովրդականության խոսուն վկայությունը։
Լերմոնտովը ոչ միայն ռուս ժողովրդի ազգային հպարտությունն է, այլև հա-
մաշխարհային պոեզիայի բարձրագագաթներից մեկը։ Երբ առաջավոր Ռուսաս-
տանն իր վերջին հրաժեշտն էր տալիս Պուշկինին, համաժողովրդական սգի և
զուսպ տագնապի օրերին լսվեց տակավին անհայտ Լերմոնտովի վրդովված և
ցասումով լի ձայնը, որ համարձակորեն մատնացույց էր անում Պուշկինի դա-
հիճներին։ Ռուս զրույների մարտիրոսագրության մեջ Պուշկինը Ռոմանովների
առաջին զոհը չէր։ Ռադիշչևը հուսահատ ինքնասպան էր եղել, Ռիլևեր կախա-
յան էր բարձրացված, Խրիբոյեզովը ուղարկված էր հոշոտվելու Պարսկաստա-
նում, Պոլեժանը, Օդոևսկին իրենց մահկանացուն կնքեցին արսորի ճանա-
պարհներում։ Սակայն Պուշկինի նկատմամբ կասկածված ոճիրը այնքան անս-
պասելի էր և Չմհուային պալատից արձակված գնդակը այնքան անսքող, որ
ռուս առաջագեմ շրջանները հասկացան, որ ցարը շարունակում է դաժանորեն
հաշիվ մաքրել առաջավոր սերնդի լավագույն ղեմքերի հետ, շխնայելով նույն-
ըսկ իր ազգային հանճարին։ Լերմոնտովը առաջինն էր, որ իր ոտանավորով
մերկացրեց օրենքի ներքո պատսպարված Պուշկինի դահիճներին։

Իմ գուժ, սերունդներ գտող ու աճարդ
Ստոր գործերով հալածի հալերի.
Ու տուրել եմ ձեր բաբերի տակ
Այն բեկորները զբլված տոհմերի,
Դու՛ք պահե՛ք կառչած ալպահ և անգոհ
Դահլիճներ փառքի և ազատության.
Պատասպանվել եմ օրենքի ներքո.
Չեզ համար ինձ դատ և ինչ դատաստան։

Ձեռագիր օրինակներով «Պոետի մահ» բանաստեղծությունը լայնորեն
տարածվեց Ռուսաստանով մեկ։ Լերմոնտովի ձեռք բերած համաժողովրդական
հռչակը արդեն այն համոզումն էր ներշնչում, որ ռուս պոեզիայի հերկուլեսյան
սուրբ պետին չի մնա։ Ժամանակակիցները չէին կարող ենթադրել, որ «Պոետի
մահ» հանկարծահա՛ր լոնկման արդյունք չէր, այլ ղեռնս պատանեկան տա-
րիներից խմորված ըմբոստ տրամադրությունների օրինաչափ արտահայտու-
թյուն։

թյունը, ղեկաբրիստական պոեզիայի արգասավոր ազդեցության հետևանքով 15-ամյա պատանին իր «Տաճկի զանգատը» բանաստեղծության մեջ հետևյալ տողերով է բնութագրում ճորտատիրական Ուսսաստանը.

Там рано жизнь тяжка бывает для людей,
Там за утехами несется укоризна,
Там стонет человек от рабства и цепей!..
Друг! этот край... моя отчизна!

«Նախագուշակում» բանաստեղծությունում Հերմոնտովը սպառնում էր ցարերին զաւիթի ահեղ դատաստանով:

Կրդա տաճին, Ռուսիայի սև տաճին,
 Եւր ցաւերի բազեր կրտապալկին:
 Լճորին իրենց հանցեալ սեր էլ չի գգա—
 Սնունդն էլ շատերի կրլինի աւրուն ու ման:

«30-ր հուլիսի 1830 թվական» րանաստեղծության մեջ, արձագանքելով Փարիզի հեղափոխական դեպքերին, Հերմոնտովը մերկացնում է Ֆրանսիայի զահրնեկեց եղած միայետին հետեյայ տողերով.

Լեւրալին Լլ կա Երկրում դատաստան:—
Ու վախճանը Բո Նա ազգաբարեց.
Եվ Բո դողդոջուն ղլուին հավիտյան
Փոխութիւնի յսահին յսապը կորցրեց:

Իսկ երբ բանաստեղծը բնականորեն կարգադրության վերջին անգամ թողնում էր Պետերբուրգը, ցարական Ռուսաստանի երեսին նետեց հետևյալ դասկոտ տողերը.

Մենա բառով, դու, Ռուսիա սնմամբուր
Երկիր տերերի և նորտերի,
Մնա բառով դու, մուղիներ Կապույտ
ժողովուրդ նրանց հյու գերի:

Գոյցէ Կովկասի լեռներում ևս
Ժաճկում Բո Նենդ փաշաներից,
Նրանց աշխերից ամենատես,
Լմեն ինչ խող ականջներից:

Եվ վերջապես «Շունիշարի 1-ը», «Դիմակահանդես», ինչպես և մի շարք այլ գործերում Հերմոնտովը մերկացնում է ռուսական արիստոկրատիան, ցույց տալիս դիմակագերծ արված տիտղոսավոր պետերբուրգյան վերնախավը, որի մասին Գերցենը գրում էր. «Ռուսական ազնվականության ծաղկումը ավարտվեց... Նրա ընդերքում ինչ առաքինի էր ու համարձակ, գտնվում է Սիբիրի հանքերում: Այն, ինչ մնացել կամ պահպանվել է տիրակալի ողորմածությանը, ընկել է մինչև ստորության կամ ստրկական հնազանդության աստիճանը»։ Այդ ազնվականությանն են հասցեագրված Հերմոնտովի հետևյալ տողերը.

ՈՐ, ես ինչպես եմ զսեկանում իմանալու, երանք ուրախությամբ
 եմ հանդիմարար երանք, իրենից շարունակ դառնությամբ ու շարունակությամբ
 Ողորդված երկարե մի ստանալով...

Տակավի՛ն մանկական տարիներից, իր տատի ազնվական դաստակերտի միջավայրում լեռմոնտովր տեսավ ճորտ գյուղացու անյուր կեղեքումը, նրա ողորմելի և անօգնական վիճակը։ Եվ այդա հյուսիսից հարավ տանող իր աքսո-

րի ուղիներում բանաստեղծի աչքից չէին կարող վրիպել ռուսական «թախծոտ գյուղակաները», գյուղացու կյանքի անհրապույր պատկերները. քանի՜-քանի՜ անգամ նա դալար ճիպոտների հետքեր է տեսել գյուղացու կոնակին, քանի՜ անգամ նա տատի փեշերից կախված ներում է աղերսել զանակոծության դատապարտված գյուղացու համար: Հետագայում, «Օտարոտի մարդը» դրամայում Լերմոնտովի հերոսին ճորտ գյուղացին պատմում է այն մասին, որ «տիրուհու ձեռքից ապրուստ չկա» և որ նրա կարգադրությամբ «Ֆեդկայի ձեռները դազդահուլ՝ դալարել են և դարձրել հաշմանդամ»: Սակայն Լերմոնտովը տեսավ ոչ միայն գյուղացիության անօղնական վիճակը, նրա անլուր շահագործումը, այլև տեղյակ էր կալվածատերերի դեմ գյուղացիության մղած պայքարի դրոշմազաններին և ըմբոստացումներին: Իր անավարտ «Վադիմ» վեպում նա պատկերեց պուդաչովյան ապստամբության հետևանքով ծավալված գյուղացիական շարժումները:

Խոր ու կարոտակեզ, կամ ինչպես ինքն է ասում՝ մի տարօրինակ սիրով է սիրել Լերմոնտովը իր հայրենիքը. նրա պարզ հայրենասիրությունը նման չէր պաշտոնական, քաղցր-մեղցր հայրենասիրությանը: Հուզաթաթափ տողերով նա արտահայտել է վսեմ ու անմիջական, սրտին ու հոգուն հարազատ և կաթողին հայրենակարոտ մի զգացում.

Սիրում եմ գյուղի ճամփով սուրալ սայլով,
Խոր հայացքով ճեղքել ստվերը գիշերի,
Շրջապատում դիտել, հանգիստ երազելով
Կրակները դողողը թախծոտ գյուղակաների:

Ես դուր ծուխն եմ սիրում խուլահներին՝ կիզվող,
Քոչվորական շաբը՝ տափաստանում,
Եվ բլուրի վրա արդեն ղեզնած աւետում
Կեչիների զույգը ըսպիտակող:

Լերմոնտովը խորապես գիտակցում էր իր ժողովրդի գյուղացնական ոգին, որը միշտ սլատրաստ է հայրենիքի վրա կախված վտանգի պահին ծավալվելու ամբողջ թափով և իր ուժի ամբողջ զորությամբ: «Բորոդինո» բանաստեղծության մեջ հայրենական պատերազմի մասնակից ռուս զինվորի անպաճույճ խոսքերով նա ցույց տվեց ռուս ժողովրդի դիմադրական կորովը, կուլելու և թշնամուն հաղթելու վճռականությունը: «Ազատության վերջին զավակը» պոեմում բանաստեղծը կերտեց Վադիմի հերոսական կերպարը, որ պայքարի է դուրս գալիս Ռյուրիկի դեմ հանուն նովգորոդի անկախության: Եվ վերջապես, «Երդ արքա Իվան Վասիլևիչի, ջահել օպրիչնիկի և կտրիճ կուպեց Կալաշնիկովի մասին» պոեմում նա վեր հանեց ռուս մարդու ազդային բնավորության բնորոշ դժերը՝ պատվասիրությունը, ազնվությունը, շարին հակառակ կանգնելու վճռականությունը:

Դեկարրիսաների ապստամբության պարտությունից հետո 1839-ական թթ. հասարակական կյանքի տեղափոխության և ռեակցիայի տարիներ հանդիսացան: Ապստամբության ուրվականից վախեցած ցարիզմը դաժանորեն հալածում և ճնշում էր այն ամենը, ինչ առաջավոր էր Ռուսաստանում: Կյանքի խոր բեկման շրջան էր այդ, ծանր հուսախաբության և հուսահատության տարիներ, նախորդ շրջանի ոգևորության փոխարեն՝ դառն հիասթափություն, թախծոտ տրտմություն՝ խանդավառ տրամադրության փոխարեն, տանջող միայնություն՝ հավաքական ջանքերի փոխարեն և վերջապես կյանքին ակտիվ միջա-

մուտ լինելու փոխարեն՝ փախուստ այդ իրականությունից և անտարբերություն կյանքի առաջադիմության նկատմամբ: «Պաշտոնական Ռուսաստանի, ֆասադային իմպերիայի մակերեսում,—գրում էր Գերցենը,—երեւում էին միայն կորուստներ, մոլեղնած ուակցիա, անմարդկային հետապնդումներ, բռնակալության սաստկացում: Ամեն ինչ լուռ էր»: Գերցենը տվել է նաև իր սերնդի բնութագիրը: «Լերմոնտովը,—գրում էր նա,—ումբողջապես պատկանում էր մեր սերնդին: Մենք շատ երիտասարդ էինք, որպեսզի մասնակցեինք ղեկավարների 14-ին: Արթնացած սյդ մեծ օրով, մենք միայն տեսանք մահապատիժներ և արսոր: Դատապարտված լուսիլան, զսպելով մեր տրցունքները, մենք սովորեցինք կենտրոնանալ, թաքցնել մեր մտքերը և ինչպիսի՝ մտքեր... Դրանք ոչ թե լուսավորչալ լիբերալիզմի առաջադիմության գաղափարներ էին, դրանք կասկածանքներ էին, բացասում և ոխակալ մտքեր...»: Լերմոնտովի պոեզիան արտահայտում էր այդ սերնդի ծանր տարակուսանքները, նրա առաքապանքներն ու երկրնտրանքները, նրա թերահավատությունը գալիքի նկատմամբ: Բելինսկին ճիշտ է նկատել, թե Լերմոնտովի պոեզիան «բոլոր էր իր ժամանակաշրջանի սերնդի նկատմամբ, որը նիրհում է անգործության մեջ»: Տակավին 15-ամյա Լերմոնտովը «Մենախոսություն» բանաստեղծության մեջ իր սերնդի կյանքը նմանեցնում էր գորշ երկնակամարում միապաղաղ շարժվող ձմռան արևին, մառախլապատ մի կյանք, որին պետք չէ ոչ փառք, ոչ իմացություն, քանի որ չկա ասպարեզ իր ուժերի գործադրության համար: 1839 թ. գրված «Խոհ» բանաստեղծության մեջ երևում են Լերմոնտովի ավելի մոայլ խորհրդածությունները իր սերնդի մասին.

Печально я гляжу на наше поколение!
Его грядущее — иль пусто, иль темно,
Меж тем, под бременем познания и сомнения.
В бездействии состарится оно.
Богаты мы, едва из колыбели,
Ошибками отцов и поздним их умом,
И жизнь уж нас томит, как ровный путь без цели,
Как пир на празднике чужом.
К добру и злу постыдно равнодушны,
В начале поприща мы вянем без борьбы;
Перед опасностью позорно-малодушны,
И перед властью — презренные рабы.

Բելինսկին գրում էր. «Եվ նոր սերնդի մարդկանցից ո՛վ նրա մեջ չի գրտնում իր սեփական վհատության, հոգեկան ապատիայի, ներքին դատարկության գուշակումը և իր ողբով և հառաչանքներով չի արձագանքում նրան»: Այդ բանաստեղծությունը Բելինսկին դիտում է որպես եռանդուն կոչ ուղղված իր սերնդի մարդկանց, գայրույթի խոսք անարգված հասարակության նկատմամբ: Լերմոնտովի մի շարք բանաստեղծությունների միջով, որպես միջանցիկ մի տրամադրություն, անցնում է թախծի և տրտմության այդ զգացողությունը, որը երբևէ հասնում է ողբերգական հնչեղության: Սակայն նրա պոեզիայի մեծիմաստ խորհուրդը կայանում է նրանում, որ հասարակական անտարբերության և անշարժության այդ ծանր պատմաշրջանում, իր սերնդի տաղտուկ և կրավորական կյանքին հանդիման Լերմոնտովը վեր հանեց հպարտ հերոսներ իրենց փոթորկահույզ կրքերով, վեհ պոսթկոմներով, հերոսներ, որոնք ծառայում են իրենց ստորացնող միջավայրի դեմ և վրիժառու լինում

կյանքից ու հասարակությունից իրենց հասցրած բարոյական տառապանքների համար: Ուժեղ և մտավոր հարուստ կարողություններով օժտված նրա հերոսների ձգտումների հզոր ազդակը ազատասիրությունն է, հայրենասիրությունը, աշխարհի սերը, առաքինության պաշտամունքը: Իր հերոսներին կերմոնտովը օժտում է տիտանական ձգտումներով, հակադրում աշխարհին, ժխտելով այն ամենը, ինչ կաշկանդում է նրանց ձգտումները: Նրա հերոսները միշտ էլ պայքարի մեջ են աստվածային և մարդկային կարողների հետ, աշխատելով խաբսուլելով դասային պայմանականությունները, ազդային, ընտանեկան և բարոյական արգելքները: Իր հույարտ ուժանտիկական կերպարներով կերմոնտովը գալիս էր ժխտելու ճորտատիրական հասարակության կյանքի սկզբունքները և դրա մեջ էր նրա ստեղծագործության առաջադիմական դերը իր ժամանակաշրջանի համար: Հերոսական բախում՝ ահա կերմոնտովի ստեղծագործության ոգին: Սակայն նրա հերոսները չգիտեն իրենց իդեալների իրականացման ուղիները, նրանց անձանոթ էն հասարակական կյանքի վերափոխության միջոցները, ուստի և նրանց խռովքը ոչ միայն նրանց ուժն է, այլև նրանց թուլությունը: Իրենց պայքարում նրանք սոցիալական հենարան չեն որոնում, ասպարեզ են գալիս միշտ մենակ և միշտ էլ դատապարտվում կորստյան: Դեմոնական մոտիվը նրա պոեզիայում հենց այդ իդեալի անիրականանալի լինելու հետևանքն է: «Դե» պոեմը, որը նրա փիլիսոփայական մտորումների գեղարվեստական ընդհանրացումն է, ցույց է տալիս շարի և բարու միջև եղող խոր հակասությունը: կերմոնտովի Դեր շարի խորհրդանիշ չէ, ընդհակառակը, նա շարիբից ձևված հույարտ ոգի է, ուստի և շարացած է աշխարհի վրա: Չարիքը նրա սկզբունքը չէ, այլ հետևանքը՝ կյանքի նկատմամբ ունեցած հիասթափության: Դեր շարիք է սփռում առանց բավականության և այդ է պատճառը, որ Թամարին սիրելու մոմենտը նրա վերածնության սկիզբն է հանդիսանում: Սիրելով Թամարին, Դեր ճաշակում է «սիրո, բարության, գեղեցկության հմայքը» և դնում դեպի իր սիրո էակը՝ «սիրելու պատրաստ և բարիքի համար սիրտը բաց»: Ժամանակակիցները այդ պոեմը ընկալեցին որպես անհնազանդ ոգու պայքար երկրային թագավորների դեմ, ոգի, որը պահանջում էր ազատ ապրել: ազատ մտածել և ազատ ստեղծագործել: Սակայն Դեր անտարբեր է մաքրելության նկատմամբ, և այդ է նրա խոցելի կողմը: Դաժան աշխարհում ամեն ինչ մահ է բերում, ինչպես Դերի սերը մահ բերեց Թամարին: Այդ աշխարհում մարդը չի կարող հավատալ սիրո մաքրությանն ու սրբությանը, ինչպես շահվատացի իր սիրույն Արրենինը և դարձավ հանցագործ: կերմոնտովը չգիտեր այդ իրականությունից ելնելու ուղիները: «Մեր ժամանակի հերոսը» վեպի նպատակադրումը ոչ թե «մաքրելային արատների ուղղիչ դառնալու պատրանքն է», այլ ժամանակակից սերնդի հիվանդությունը մասնանշելու: Սոցիալական արատները բուժելու միջոցները անձանոթ էին կերմոնտովին: Սակայն նրա պոեզիայի մեծագույն նշանակությունը նրանումն էր, որ հաստատում էր այն գոտեպնդող միտքը, թե այդ մոռյլ և դառնաղետ կյանքում ամեն ինչ կործանված է, թե կան հերոսներ, որոնք երբեք չեն խոնարհում իրենց գլուխը բռնության և շարի հանդեպ, որոնք իրենց կոչումը տեսնում են պայքարի մեջ ու պսակում: են իրենց մարտի փառքով ու անմահությանը, թեև կյանքի գնով:

Ի. Բրանդեսն այն միտքն է հայտնել, թե ուժանտիկան իր էությունը ուղիստության ճիշ է եղել: կերմոնտովի հերոսները բերում էին բանաստեղծի անկեղծ ճիշը, իրեն կաշկանդող կյանքից ելնելու նրա անզուսպ ձգտումը:

Ստեղծագործական կյանքի վերջին շրջանում դրած երկերում, հատկապես «Մեր ժամանակի հերոսը» վեպում Լերմոնտովն անցնում էր ղեպի կյանքի ռեալիստական նկարագրությունը, տեսնում կյանքի մեջ ոչ միայն բացառիկը, այլև առօրեականը՝ իր տիպիկական ընդհանրացումներով։ Լերմոնտովը ռուս պոեզիայի հարստացրեց սիրային չքնաղ բանաստեղծություններով։ Բելինսկու դիպուկ արտահայտությամբ, նրա սիրային բանաստեղծությունները տապա-նադրեր են կործանված ուրախությունների հուշարձանների վրա։ Սակայն սերը սերտորեն կապված է ղեպի առաքինին ու վսեմ ունեցած ձգտման հետ և միշտ էլ դառնում է մարդու վերածնության հզոր ազդակներից մեկը, որը չի նվաստացնում և ստրկացնում մարդուն, այլ դառնում է կյանքի լիակատարության արտահայտություն։

Մեծ է էղել Լերմոնտովի ստեղծագործության ազդեցությունը ռուս գրականության զարգացման մեջ։ Նեկրասովից սկսած մինչև Մայակովսկին կրել են նրա պոեզիայի արդասավորող ազդեցությունը։ Տոլստոյը, Զեխովը, Բլոկը և շատ ուրիշներ հիացմունքով են խոսել նրա պոեզիայի մասին։

* * *

Լերմոնտովի պոեզիան համամարդկային է իր նշանակությամբ, որովհետև նրան էր վիճակված Պուշկինից հետո զարգացնելու ռուս գրականության մեծարժեք հատկություններից մեկը, որը Դոստոևսկին բնորոշել է իրեն համաշխարհային կարեկցություն (всемирная отзывчивость), համամարդկային զգայնություն, բոլոր ժողովուրդների կյանքի դեպքերին ու անցքերին արձագանքելու բացառիկ հատկություն։ Բանաստեղծի սեկունդ հայացքը թեև ծնունդ էր ոչ միայն իր ժողովրդի ներկայում և անցյալում, այլև ձգտում էր ճանաչել տարբեր ժողովուրդների կյանքի առանձնահատկությունները, թափանցում էր նրանց ողու, ազգային խառնվածքի, կենցաղի ու սովորույթների ոլորտը և այդ ամենը մարմնավորում իր ստեղծագործության մեջ։

Նա մեզ մերթ տեղափոխում է XVI դարի Իսպանիան ու պատմում դասային կաշկանդումների դեմ ծաուսցած Ֆերնանդոյի մասին, մերթ տանում Բտալիա՝ ի տես Ջուրիոյի սիրո ողբերգության, ապա Լիտվա՝ տեսնելու հայրենակարոտ լիտվուհու ցասումը, բերում Կովկաս՝ Չեչնիա, Վրաստան, Ադրբեջան, որտեղ մի հայրենազուրժ Դղմայիլ-Բեյ, իշխանուհի Թամար կամ սիրատու շուր աշուղ Դարիբ հանդես են գալիս իրեն ժողովրդի լավագույն հատկությունների ղեղարկետական վկայություն։ Զառմանուլի պատկերավորությամբ նա բացում է մեր առջև Արարիայի ավազուտները՝ ուղտերի քարավանի ղողանչով ու արմավներով, Խերեքի ափերը՝ Գրերենյան կողակներով, լեռնաբնակ չեղերի կյանքը՝ իրենց ուրույն սովորույթներով։ Ռուս գրականության բնորոշ հատկությունն է դա՝ բոլոր ժողովուրդների նկատմամբ սիրո և կարեկցության հատկությունը, որը իր համարձակ զրսևսրումը գտավ Լերմոնտովի պոեզիայում։

Լերմոնտովը, Պուշկինի հետ մեկտեղ, իրավամբ վաստակել է «Կովկասի որդեգիր» անունը։ Մանկական տարիներից լինելով Կովկասում, Լերմոնտովը, ղյովված նրա ղեղատեսիլ բնությամբ, վեհանիստ լեռներով ու կիրճերով, մրթին այրերով և ւայառածներով, սիրեց այդ երկրամասը, ոչր խուռներամ տպավորություններով հմալում և տանում էր պատանուն ցնորքների ու հրապույրների աշխարհը։ Մի Ներքին մզումով, հենց այդ տուրիներից, նա կապվեց

հեքիաթային այդ լեռնաշխարհի հետ, որի մասին այնքան ջերմակարոտ տողեր է դրել հետադայում. «Կովկասի կապույտ լեռներ, ողջունում եմ ձեզ: Դուք օրորեցիք մանկությունն իմ, դուք թևածել եք ինձ ձեր վայրի լեռնադադաթների վրա, ամպերին հանդերձներ եք ինձ հաղցրել. դուք երկնքին եք ինձ բնտելացրել և ես այն ժամանակից երազել եմ ձեռք և երկնքի մասին»: 1832 թ. նա գրում էր.

Քեզ եմ, բեզ, իմ ջերմ ողջույնը բերում,
 Այլուր Կովկաս: ես եմ լեռներում
 Ուրա՛ն համիրդ չեմ: Սանկուրյան օրից
 Նրա՛նք հանաչել, փայփայել եմ ինձ,
 Եվ ընտելացրել իմ մատաղ հողին
 Քո խուլ վայրերին, բո վառ երկնքին.
 Եվ միշտ այդ օրից ցնորֆս է եղած
 Հաւաքի երկիճեմ, լեռներ սեւացած:

Սակայն Հերմոնտովը, որպես վարարանդի և հալածական, կրկին ու կրկին փորձելով էր լինել Կովկասում և այստեղ գտնել իր անառնողաստ ու դառնառիտ կյանքի ապաստանը, իր վիրավոր հոգու խաղաղ հանգրվանը: Աքսորական բանաստեղծը, մերթ փոխակառույց, մերթ հետևակ, տնցավ երկրամասի հայտնի երթուղիներով, Ղուբայից մինչև Շուշի, Շամախի, Ստավրոպոլից մինչև Թրիխսի, Կախեթիա... Եվ ով գիտե ինչ նորաշավիղներով լեռնակատարներ է բարձրացել, ինչպես ինքն է գրում «չերքեզական բուրկան ուսերին քնել շնադայների ոռնոցի տակ», բարձրացել Սցխեթ, ուր տապանաքարերն ու վանականները պատմում էին նրան անցած-վնացած դեպքերի մասին, տեսել հաղարամյա կոթողներ, ավերակ բերդեր, որոնց ամեն մի քարը ավանդական դեպքերի, առասպելական եղևությունների կենդանի գրույց էր նրա համար: Իր ընկերոջը դրած նամակում Հերմոնտովը, սքանչացած Ռազմավիրական ճանապարհի լեռնանցքից բացվող տեսարանով, ասում էր, թե ինքը «պատրաստ է նստել և ամբողջ կյանքում միայն նայել»: Սակայն Կովկասի բնակարը և դարերի խորքից լսվող մռայլ ավանդությունները չէին միայն զբաղեցնում բանաստեղծին, այլև այստեղ բնակվող հնադարյան ժողովուրդների կյանքը, նրանց կենցաղը, երգերն ու վշտերը: Իր նամակներից մեկում նա հայտնում էր, որ փորձում է սովորել աղբբեջաներեն, որը «այստեղ նույնքան անհրաժեշտ է, որքան ֆրանսերենը Եվրոպայում»: «Ես,—չարունակում է նա,—չատ բան եմ սովորել ասիացիներից և ես կկամենայի թափանցել ասիական աշխարհամբռնման դադտիքները մեջ... Հավատա՛ ինձ, այստեղ, Արևելքում է հարուստ հայտնադործությունների պաղտնարանը: Բանաստեղծը ակամա վկա դարձավ նաև իրենց անկախության համար մարտնչող Կովկասի լեռնաբնակ ժողովուրդների պայքարի զրվագներին, նրանց անհավասար կռվի հուսահատ ճիգերին:

Կովկաս, երկիր դու ճեղավոր
 Որևան պահող ազատության,
 Դու էլ կովում առյուծահորդ,
 Դու էլ ես ի դժբախտությամբ:

Նրա թևածող հայացքից աննկատ շմնացին այդ ժողովուրդների ազատափրությունը, պայքարի նրանց կորովը, հայրենիքի նկատմամբ ունեցած նրանց սերը, նրանց մարդկային ու առաքինի դժերը:

Այնտեղ հանցանք չէ սղաճել մարդուն
 Անսուտ է վրեժն ու մտերմություն.
 Այնտեղ սովոր են բարիքին-բարիք
 Արյուն տեղ արյուն պարզել մարդիկ:

Կովկասում ապրած տարիները Հերմոնտովի համար նոր խոհերի և հարուստ տպավորությունների տարիներ հանդիսացան: Յուրաքանչյուր վայրը, ուր ոտք է դրել նա, ամեն մի գրույց կամ ավանդավեպ, որը լսել է, դառնում էին բանաստեղծական պատկեր, սքանչելի պոեմ կամ արձակ հորինվածք: Ղզլարում, հասթաթյանների տանը Իզմայիլ Աթաթուկինի մասին լսած գրույցը դարձավ սյունաշար պոեմ, Քերեքի ափերին լսած կոզակական երգերը՝ օրորոցային մեղեդի, Մցխեթի Սվիտիցխավելի տաճարի խուցերը հուշեցին պոեմ մենաստանում գերված պատանու մասին, իսկ Շամախում շինարների տակ լսած աշուղների երգերը՝ սքանչելի հեքիաթ աշուղ Ղարիբի մասին: Իրավացի էր Բելինսկին, երբ գրում էր թե «նա սիրում էր Կովկասը պոետի ամբողջ կրքով և այն դիտում ոչ թե այնպիսի խանդավառությամբ, որը ամեն ինչի մեջ տեսնում է միայն արտաքինը և հիացմունքը արտահայտում ճիշտով, այլ մի սենսուս զգացումով, որը թափանցում է առարկայի էության և խորության մեջ», որը իշխում է իր հիացմունքին և այն վերարտադրում վայելչագեղ, ներդաշնակ ու պարզ, բայց և տիպիկական կերպարներով: Եվ Հերմոնտովը իր ստեղծագործությամբ լիովին վարձահատույց եղավ Կովկասին, այն երկրին, որը Բելինսկու վկայությամբ «զմայլեց նրա պոետիկական հոգին վիթխարակերտ բնությունից և նրա ժողովրդից առնված տպավորությունների համար»: Ֆրիդրիխ Բոդենշտեյնը գրել է. «Թող ցույց տան ինձ աշխարհագրական, պատմական և այլ բազմաթիվ ստեղծագործություններից թեկուզ մի ստվարածավալ դիրք Կովկասի մասին, որից կարելի լինի ավելի կենդանի և հարազատորեն ճանաչել այդ լեռների և այդտեղ ապրող ժողովրդի հատկանշական բնությունը», քան Հերմոնտովի մեկ պոեմը, որի գործողության վայրը Կովկասն է»:

Հիսուն տարի առաջ, Հերմոնտովի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության օրերին Շ. Թումանյանը գրում էր. «Եվ երբ կգա Հերմոնտովի հարյուրամյակի կատարման օրը, մենք կովկասցիներս կտոնենք ոչ միայն մի մեծ ողու բանաստեղծի տոն, որին, ինչպես և առհասարակ ողու զրականությանը, շատ բան ենք պարտական: Այլ որպես մի բանաստեղծի, որ հոգով հարազատ է մեզ, որ մեր ընդհանուր մոր՝ Կովկասի աննման որդեգիրն է, որ ղեռ մանուկ օրերից երկինքն ու Կովկասի կապույտ սարերն է երազել»:

Հերմոնտովի ծննդյան 150-ամյակի այս օրերին, մենք գլուխ ենք խոնարհում հանճարեղ բանաստեղծի անվան հանդեպ, որը կարողացավ շռայլորեն պերճ գույներով ասեղնագործել մեր հայրենի եզերքը, կաթոգին մի սեր արտահայտել ցարիզմի կողմից հալածված Կովկասի ժողովուրդների նկատմամբ, բոլորանվեր մի սեր, որը նա դրել է մի նժարի վրա հայրենակարոտ երգի և մանուկ հասակում կորցրած իր մոր ձայնի հետ:

Хотя я судьбой на заре моих дней,
 О, южные горы, отторгнут от вас,
 Чтоб вечно их помнить, там надо быть раз:
 Как сладкую песню отчизны моей,
 Люблю я Кавказ.

В младенческих летах я мать потерял.
 По мне, что в розовый вечера час
 Та степь повторяла мне памятный глас.
 За это люблю я вершины тех скал,
 Люблю я Кавказ.

* * *

Նշանակալից է եղել Լերմոնտովի պոեզիայի ազդեցությունը հայ ժողովրդի ավելի քան մեկդարյա հոգևոր մշակույթի պատմության մեջ: Լերմոնտովի պոեզիան համահնչուն է եղել հայ ժողովրդի ազատագրական նկրտումներին ազդային և սոցիալական ազատագրության համար նրա մղած պայքարում: Այդ պոեզիայում հայ ժողովուրդը գտել է նվիրական խոհեր, իղծեր և ձգտումներ: Մեր ժողովրդին հարազատ ու մատչելի են եղել ռուս մեծ պոետի ստեղծագործության մոտիվները, լինի դա ռազմի դաշտը՝ լքող փախստականի նկատմամբ բորբոքված ատելությունը, Կալաշնիկովի՝ ընտանիքի պատվի պաշտպանության կորուվր, թե Մծիրիի ազատաբաղձ տենչը: Լերմոնտովի բանաստեղծական պատկերների՝ «պանդուխտ ամպերի», «մենավոր առազաստի», «մայր հողից պոկված ոստի» մեջ հայ ժողովուրդը ասես տեսել է իր պատմական անցյալի բանաստեղծական ընդհանրացումը, թափառող առազաստի պես իր հալածական ու տարագիր ճակատագիրը: Նրա պոեզիայի հերոսական ոգին, սխրագործության դովքը և վսեմ հայրենասիրությունը միշտ էլ հարազատ և սիրելի են եղել մեր ժողովրդին: Լերմոնտովի պոեզիան արգասավորել է հայ դրականությունը ազատասիրական տենչերով, պայքարի խոյանքներով ու քաղցր մտորումներով: Մ. Նալբանդյանի ռմբոստահույզ պոեզիայի, Ս. Շահազիզի թախծոտ մեղեդիների, Ալ. Սպենդիարյանի եղերերգերի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ալ. Սատուրյանի, Վ. Սուրենյանցի, Ավ. Իսահակյանի, — հայ մշակույթի լավագույն սերնդի ստեղծագործությունների մեջ առկա է այդ պոեզիայի բարերար ազդեցությունը:

Հայ իրականության մեջ հետաքրքրությունն ու սերը Լերմոնտովի պոեզիայի նկատմամբ արտահայտվել է նախ և առաջ նրա երկերի թարգմանությունների միջոցով: Ինոկս անցյալ դարի 40-ական թթ. սկսած հայ մշակույթի առաջավոր գործիչները հսկայական ջանքեր են թափել նրա երկերը թարգմանելու ուղղությամբ: Առաջին թարգմանությունը կատարել է Լազարյան ճեմարանի աշակերտ Հ. Համազասպյանը, 1843 թ.: Մոսկվայում հրատարակված իր ժողովածուի մեջ, որը «Թարգմանութիւնք արձակ և ռոտանավոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովոյ, Բարյատինսկոյ և Գնեդիչէ» խորագիրն ունի, Համազասպյանը Լերմոնտովից երկու թարգմանություն է գետեղել՝ «Հրեշտակ»-ը և «Եղևինը»: Այդ ժողովածուն գրական առաջին նշանակալից գիրքն է, որը հայ ընթերցողին էր ներկայացնում ռուս բանաստեղծների գործերը: Չի կարելի չհիշատակել, որ մի ամբողջ պատմաշրջանի համար, ընդհուպ մինչև անցյալ դարի 70—80-ական թթ. այդ ժողովածուն է եղել ծաղկաքաղի միակ աղբյուրը, երբ անհրաժեշտ է եղել հայ ընթերցողին ներկայացնել ռուս պոեզիան:

Մեծ է եղել Լերմոնտովի պոեզիայի հմայքը 1860-ական թթ. հայ գրական-հասարակական շրջաններում: Այդ պոեզիայի ազդեցությունը հատկապես զգացվում է Ս. Նազարյանի, Մ. Նալբանդյանի և Ս. Շահազիզի ստեղծագործություններում: Լերմոնտովի պոեզիայի հայրենասիրությունը, մարդու իրա-

վունքների պաշտպանության և բռնության դեմ պայքարի կենսահաստատ իդեալները համահնչուն էին նախնադրյալի պոեզիայի մարտական ոգուն։ Նախնադրյալը Լեւոնտովից թարգմանել է «Մարգարե», «Պաղեստինի ոստը» և «Վեճ» բանաստեղծությունները, որոնք իրենց դադափարական միտումներով անպայման սկզբունքային նշանակություն ունեն։ «Մարգարեն» թարգմանել է նաև Ս. Նազարյանը։

Մեր դրականության պատմության մեջ Լեւոնտովի մասին առաջին քրոնիկատական խոսքը ասել է Ս. Նազարյանը։ «Հյուսիսափայլ»-ում տպագրելով «Դե»-ի Մաղաթյանի թարգմանությունը, Նազարյանը հանդես է գալիս հատուկ առաջաբանով, որի մեջ հայ ընթերցողին է ներկայացնում Լեւոնտովի պոեզիան։ Նա Լեւոնտովին համարում է «Ալեքսանդր Պուշկինի հավասարակշիռ հաջորդը»։ Նազարյանը հիշեցնում է, որ Լեւոնտովի վախճանը նույնը եղավ, ինչ Պուշկինին և ակնարկում նրա «վրեժխնդիր տաղերգությունը, որ հնչեցուցել էր Պուշկինի զերեզմանի վերա»։ Նազարյանը աշխատում է բնութագրել Լեւոնտովի պոեզիան և ցույց տալ այն խոր հակասությունը, որը եղել է «մրտավորական կատարելատիպի (իդեալի) և իրական ստույգ աշխարհի մեջ՝ այն առնչության վերա, որ մի հոգեազգաց մարդ ունի ղեպի ընկերությունը»։ Նազարյանը խոսում է Լեւոնտովի «բանաստեղծական հոգու ընդարձակության» մասին, ընդգծելով նրա «առավել ազատ, առավել ինքնիշխան և առաջնային բնական խոսքը, որ Ռուսաստանը խոսել է մինչև այսօր աշխարհի հրապարակում»։ Այդ խոսքի արժեքը Նազարյանը տեսնում է այն բանի մեջ, որ եղել է «մի ազատ, առանձնավոր, բարձրագույն հոգու պատերազմ ընդդեմ մի անողորմելի ինքնակալության, որը կամեր մեծ ու փոքր հավասարել միմյանց»։ Նազարյանը մեջ է բերում «Մարգարե» բանաստեղծությունը՝ ցույց տալու համար պոետ-մարգարեի հալածական կերպարը, որը ճշմարտության խոսք էր բերում, ծառանում միջավայրի դեմ ու քարկոծ արվում այդ նույն միջավայրի կողմից։ Նմանության եզրեր գտնելով Լեւոնտովի և Բայրոնի պոեզիայի միջև, նա ընդգծում էր, որ «ազատաբաղձ ոռոսի հուսահատությունը դեմ հանդիման ցարի բռնակալության է՝ ավելի արդարացի և հիմնավոր է, քան թե անղիական լորդի հուսահատությունը՝ դեմ հանդիման յուր աշխարհի որպիսության»։ Ուշադրավ է, որ Նազարյանը ընդգծում էր, թե «ազգային բանաստեղծության ոգին» կատարյալ կերպով հանդես է եկել Լեւոնտովի «զուտ ոռոսական երգի մեջ»։ Նա գտնում է, որ «առավել բարձր բազմեցուցել է յուր անձը, ավելի ինքնաստեղծ արարիչ է Լեւոնտովը՝ յուր հարազատ, բուն ոռոսական երգի մեջ՝ «Ցար Իվան Վասիլևիչը, նորա մանուկ թիկնապահ Կիրիլևիչը և հանդուգն վաճառական Կալաշնիկովը», որի մեջ ազգային բանաստեղծության ոգին հանդես է գալիս կատարյալ ճարտարապետական զործի կերպարանքով»։ Սրանք են Նազարյանի հիմնական եզրահանգումները Լեւոնտովի պոեզիայի գնահատության հարցում և պետք է նկատենք, որ նախառնույցիոն հայ դրական քննադատության մեջ ավելի համարձակ, ավելի պիպուկ բնութագրության մենք չենք հանդիպում։ Նազարյանը թարգմանել է նաև Լեւոնտովի «Աշուղ 'Արիբ»-ը, որի առաջաբանում նշում է, թե «մեր խորհուրդը այն լինելով, որ մի հարմարավոր ընթերցանության դիրք տալինք ազգին, թե արժանապես ժամանակ անցուցանելու և թե յուրյանց միտքը ճոխացնելու... այլև յուրյանց սիրտը և զգացողությունը ազնվացնելու ղեղեկիկ դադափառներով»։

1863 թ. «Հյուսիսսփայլը» տպագրում է «Դե» պոեմը՝ Մանուկ Սաղաթյանի խարզմանությամբ, որը մեր զրականության մեջ դիտվում է որպես թարգմանական արվեստի գլուխ-գործոցներից մեկը։ Իրոք, 60-ական թթ. զրական աշխարհարարի թոթովախոսության շրջանում Սաղաթյանի թարգմանությունը զրական աշխարհարարի հաղթանակի վկայությունն էր, և պետք է նկատել, որ «Դե»-ի հետագա թարգմանությունները չկարողացան հասնել Սաղաթյանի թարգմանության մակարդակին։

Լերմոնտովից կրած ազդեցության մասին է խոսում նաև Ս. Շահազիզը Ֆուրի Վեսելովսկուն ուղղած իր պատասխան-նամակում. «Ռուս պոետներից ամենաուժեղ ազդեցություն են ունեցել ինձ վրա, իհարկե, Պուշկինը և Լերմոնտովը... Ինչ վերաբերում է Լերմոնտովին, ապա նրա ստեղծագործությունները (օրինակ՝ «Մեր ժամանակի հերոսը») միշտ էլ արթնացրել են իմ մեջ բազմաթիվ խոհեր, ազդել են ինձ վրա իրենց ներքին բովանդակությամբ, մշակելու համար տվել են հայտնի մոտիվներ և թեմաներ։ Եթե «Լեոնի վիշտը» պոեմի էպիգրաֆը վերցված է «Մեր ժամանակի հերոսից» (Բավական է մարդկանց կերակրել քաղցրավենիքներով, դրանից նրանց ստամոքսները փչացել են. հարկավոր են դառնում դեղեր, կծու ճշմարտություններ), եթե առաջ «Ազատության ժամերի» մեջ հիշատակված է միայն մի դեպքում Լերմոնտովի անունը, ապա իմ «Մի քանի խոսք իմ բնակեցողներին» զրքում, որը լույս է տեսել 1903 թվականին, Լերմոնտովից քաղվածք է բերվում այն տեղում, ուր ես խոսում եմ ժամանակակից երիտասարդության ցանկալի վերաբերմունքի մասին դեպի իր հայրենի անցյալը»։ Շահազիզի այս խոստովանության մեջ նշանակալից է այն, որ Լերմոնտովը արգասավորել է նրա պոեզիան ոչ այնքան ձևական, որքան գաղափարական հատկանիշներով. Շահազիզը այդ ազդեցությունը կրել է ոչ միայն իր զրական երախայրիքի՝ «Ազատության ժամերի» ստեղծագործության շրջանում, այլ նաև իր զրական-հրապարակախոսական գործունեության վերջին շրջանում։ Այսպիսով, 1860-ական թվականների հայ պոեզիայի ուղարացր նշանավորվում է, Շահազիզի խոսքերով ասած՝ Լերմոնտովի «մեծակշիռ գաղափարների» ուղղակի ազդեցությամբ։

1870—80-ական թթ. զգալիորեն ընդլայնվում է Լերմոնտովից կատարվող թարգմանությունների դործը։ Ուշագրավ է, որ այդ տարիներին Լերմոնտովը ներկայացվում է ոչ միայն կենտրոնական հայերեն պարբերականներում, այլև դավառում։ Այսպես, 1881 թ. Շուշիում լույս է տեսնում Ն. Ավետիսյանի «Քնար խոսնակ» ժողովածուն, որի մեջ տպագրված են Լերմոնտովի բանաստեղծությունները, իսկ 1883 թ. Ս. Սաբաթյանը զոկերեն հրատարակում է «Աշուղ Ղարիբը»։ 1880—90-ական թթ. Լերմոնտովի ստեղծագործությունները երևում են նաև արևմտահայ պարբերական մամուլում։ Ազգային ուսմանտիզմի կրթահույզ տրամադրությունների շրջանն էր այդ, որը պարարտ հող էր ստեղծում Լերմոնտովի պոեզիայի տարածման համար։ 1887 թ. «Մասիս»-ում լույս են տեսնում «Փախստական» պոեմը Փանոսյանի թարգմանությամբ և Արփիարյանի հոդվածը Լերմոնտովի մասին։ «Փախստականի» ամեն մեկ բառը, ամեն մեկ տողը կմտրակե արյուն»,—գրում էր Արփիարյանը,—որովհետև դասալիքը արժանի է արհամարհանքի։ Արփիարյանի վկայությամբ՝ պոլսահայ մտավորականության շրջանում Լերմոնտովի անունը «հիացմամբ կարտասանվեր»։ Արփիարյանը գրում էր. «Օտար բանաստեղծներն ամենն ալելի մեզ բնտանի պետք էր եղած լիներ Կովկասու երգիչը»։ Կովկասը, շարունակում է նա, բա-

նաստեղծի համար ոչ թե զրոսատեղի է եղել, այլ փախստավայր, որովհետև «կիսեղիվեր մայրաքաղաքի ապականյալ մթնոլորտի մեջ և կերթար ձիաթափ թափառել ազատ տափաստաններուն մեջ, կայցելեր Կովկաս, կպարուրեր հողին Քաղբեկի, էլպոուսի, Թերեքի ազատատենչ հովերով»։ Կովկասում Լերմոնտովը տեսավ «վայրենի դուցազունք, պատրաստ մեռնելու իրենց լեռներու, իրենց իրավանց ի պաշտպանություն»։ Արփիարյանը խոսում է ղեկարրիստների մասին («հանդուգն, խիզախ, կրակոտ սպաներ էին զոքա, աքսորված էրն անդ, որպեսզի խոնարհին ի խիստ կարգապահություն») և Լերմոնտովին համարում նրանց զաղափարական համախոհ, որը «կրակոտ երիտասարդություն» հետ մեկտեղ տուժել է ազատատենչ ձգտումների համար, «ապականյալ մթնոլորտի ղեմ ծառանալու համար»։

1889 թ. նշվեց Լերմոնտովի ծննդյան 75-ամյակը, իսկ երկու տարի անց՝ մահվան 50-ամյակը։ Այդ տարելիցները խոշոր ազդակ հանդիսացան նրա պոեզիայի ժողովրդականացման համար նաև հայ իրականության մեջ։ Հատկապես անգնահատելի է Ալ. Մատուրյանի երախտիքը Լերմոնտովի ստեղծագործությունները մասսայականացնելու գործում։ Լերմոնտովը եղել է ամենահոգեհարազատ բանաստեղծը Մատուրյանի համար։ Նա թարգմանել է մոտ 35 բանաստեղծություն և զերազանցապես այն գործերը, որոնց մեջ Լերմոնտովը երևում է «իբևհոբեն թախծոտ կերպարով որպես կյանքի ծովում միշտ տառապող հոգի»։ Յու. Վեսելովսկուն զրաժ նամակում Մատուրյանը գրում է. «Իմ համեստ քնարը միշտ էլ ակնածանքով և սրբազան թրթիռով է նայել այդ վեհոբեն թախծոտ բանաստեղծական կերպարին»։

Մեծ սիրով և ակնածանքով է խոսել Լերմոնտովի մասին Հ. Թումանյանը։ Նրան է պատկանում Լերմոնտովի մի շարք բանաստեղծությունների և «Մծիրի»-ի բարձրարվեստ թարգմանությունը։ Լինելով ոուս գրականության, մասնավորապես ոուսական պոեզիայի ջերմ երկրպագուներից մեկը, Թումանյանը առանձին սիրով է արտահայտվել Լերմոնտովի մասին։ Թումանյանը խոստովանում է, որ ոուս բանաստեղծները, մասնավորապես Լերմոնտովը, իրեն ավելի հարազատ են եղել, քան նախորդ շրջանի հայ բանաստեղծները, որովհետև նրա պոեզիայում գտել է «Կովկասի սարերը, ժողովրդի սովորությունները և լեզվները»։ Շնչ էլ իբրև կովկասցի և լեռնցի,— գրում է Թումանյանը,— սիրել եմ այդ երգերն ու պոեմները։ Եվ թեև լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտն եմ ունեցել իմ հոգում, բայց անշուշտ նրանք զրդել են ինձ ու տվել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմա չի եղել, որ երգեր մեր բնությունը, ժողովրդի սովորություններն ու ավանդությունները»։

Ջգալի է եղել նաև հայ թատրոնի ավանդը Լերմոնտովի դրամատուրգիայի բեմականացման գործում։ Նրա նշանավոր «Դիմակահանդեսը» բեմ է բարձրանում 1881 թ., իսկ մեկ տարի անց Աղամյանը հանդես է գալիս Արբենինի ղերում և մտցնում այդ դրաման իր խաղացանկի մեջ։ Ռուսաստանում կատարելիք հյուրախաղերի համար Աղամյանի Արբենինը աննախընթաց հաջողություն է ունեցել Մոսկվայում, Պետերբուրգում, Օդեսայում և այլ քաղաքներում։ Ռուսական մամուլը մեծ գովեստով է խոսել հանճարեղ Աղամյանի խաղի մասին։ Իր նամակներից մեկում Աղամյանը գրում է Մոսկվայից. «Ներկայացման վերջին բոլորը մեկ՝ 11 անգամի չափ ծափահարելով՝ ինձ դուրս կանչեցին։ Երմոլովա դերասանուհին և Վոլկինան ոտքի ելնելով ինձ կծափահարե-

ին և մեջներին կասեն եղեր, թե «այսուհետև խորհուրդ չենք տար Պիսարևին Արբենինի դերը կատարել»։ Հայ թատրոնում «Դիմակահանդեսը» շուրջ 80 տարի պահպանել է իր դոլորությունը, ունենալով այնպիսի կատարողներ, ինչպես Մնակյանը, Աղամյանը, Սիրանույշը, Հասմիկը, Փափազյանը, Վաղարշյանը, Ներսիսյանը և ուրիշներ։

Լերմոնտովի ստեղծագործությունը ժողովրդի սեփականությունը դարձնելու դործը աննախընթաց չափերի հասալ սովետական տարիներին։ Սովետահայ բանաստեղծների մի ամբողջ սերունդ, սկսած Ն. Չարենցից, սիրով են խորհում նրա գործերը։ 1941 թ. լույս տեսավ բանաստեղծի երկերի երկհատորյակը։ Մի քանի հրատարակությամբ լույս են տեսել «Մեր ժամանակի հերոսը», «Դիմակահանդեսը» և այլն։

* * *

Վերջին տասնամյակում լերմոնտովագիտությունը զգալի նվաճումների հասավ Լերմոնտովի՝ կովկասյան ժողովուրդների հետ ունեցած կապերի բացահայտման ուղղությամբ։ Ուշագրավ է Լերմոնտովի՝ հայերի հետ ունեցած կապերի հարցը։ Պարզվում է, որ Լերմոնտովը մտերմական կապերով կապված է եղել հայ ընտանիքների և հայ շրջանների հետ։ Լերմոնտովի կենսագրությունից հայտնի է, որ նրա տատը 1818, 1820 և 1825 թվականներին բուժման նպատակով Լերմոնտովին բերել է Պյատիգորսկ։ Հանքային ջրերում իրիզավետա Արսենևնան բնակվել է իր հարազատ քրոջ՝ Եկատերինա հասթաթովայի մոտ։ Եկատերինա հասթաթովան եղել է գեներալ Ակիմ հասթաթովի (Հովակիմ հասթաթյան) կինը։ հասթաթյանը ղզլարցի էր, հայտնի գինվորական, Սուվորովի խիզախ ռազմիկներից մեկը, որը մասնակցել է Իզմայիլի գրավմանը, ինչպես և Կենբուրնի, Ֆոկչանի և Ռիմնիկի ճակատամարտերին և չուցաբերած արիության համար արժանացել Սուվորովի գովասանքին։ հասթաթյանը մահացել է 1809 թ. և թաղված է Պետերբուրգի հայկական գերեզմանատանը։ Լերմոնտովը սերտորեն կապված էր հասթաթյանների ընտանիքի հետ, առանձնապես մտերիմ է եղել հասթաթյանի երկու դուստրերի՝ Աննա և Մարիա հասթաթյանների հետ։ Հայտնի է, որ «Իզմայիլ Բեյ» և «Առլ Բաստունժի» պոեմները արդյունք են հասթաթյանների տանը պատանի Լերմոնտովի լսած պատմությունների։ Մարիա Ակիմովնան ամուսնացած է եղել շտաբս-կապիտան Պավել Պետրովիչ Շանգիրեյի հետ (Շանգարյան), որը նույնպես ղզլարցի հայ էր։ Լերմոնտովի ամենամտերիմ ընկերներից է եղել Շանգիրեյների որդի Ակիմ Պավլովիչ Շան-Գիրեյը, որը արժանահավատ հուշեր է թողել Լերմոնտովի մասին։

Թիֆլիսում Լերմոնտովը ծանոթ է եղել գեներալ Ֆ. Ի. Հախվերդյանի ընտանիքի հետ։ Հախվերդյանի կինը՝ Պրասկովյա Նիկոլաևնան, Լերմոնտովի ազգականն է Ստոլիպինների գծով։ Լերմոնտովի մանկական տարիների մտերիմ ընկերներից էր հայ գունակարիչ Մովսես Մելիքյանը, որը նույնպես հետաքրքիր հուշեր է թողել բանաստեղծի մասին։ Այն տարիներին, երբ Լերմոնտովը ուսանել է Սոսկվայի համալսարանում, նրա հետ այստեղ սովորել են նաև 15 հայ ուսանողներ։ Ըստ լերմոնտովագետ Պոպովի հաղորդման, համալսարանի ուսանող Գաբրիել Երեցփոխյանը ծանոթ է եղել Լերմոնտովի հետ և օգնել է նրան Կովկասին վերաբերող անհրաժեշտ նյութերով։ Եվ վերջապես, 1941 թ. Հայաստանի պետական արխիվում հայտնաբերված «Դիմոն»-ի նորա-

հայտ տարբերակը, որը պատկանել է Հազարյան ձեմարանի դասատու Քուչուկ-Հովհաննիսյանին, խոսում է այն մասին, որ այդ կապերն ավելի լայն ընդդրվում են ունեցել, քան մենք պատկերացնում ենք այսօր:

Հերմոնտովի ստեղծագործությունը աղբյուր է եղել ոչ միայն իր ժամանակակիցների, այլև գալիք սերունդների համար՝ հանուն մարդկության հրջանկության մղած նրանց պայքարում: Այդ բանի լավագույն վկայությունը նրա պոեզիայի այն անջնջելի հատկությունն է, որի մասին ռուս մեծ քննադատ Բելինսկին գրել է իր ժամանակին. «Անխորտակելի ուժ և ոգու գորություն, զուսպ բողոք, բոցավառ ոգևորություն, մեղմ թախիժ, քաղցր մտածմունք, զգացմունքի խորհրդավոր քնքշություն, հանդուգն ցանկությունների անզուսպ խոչանքներ, ժամանակակից հասարակության ցավեր, համաշխարհային կյանքի պատկերներ, սրտառուլ զղջում, կրքի լաց ու կոծ և մեղմ արցունքներ, որոնք ինչպես հնչյունը հնչյունի հետևից առատորեն թափվում են կյանքի փոթորկի խաղաղված սրտի մեջ»:

ГЕНИАЛЬНЫЙ ПОЭТ РУССКОГО НАРОДА

(К 150-летию со дня рождения М. Ю. Лермонтова)

С. О. ДАНИЕЛЯН

(Р е з ю м е)

150-летие со дня рождения Лермонтова отмечалось на всех континентах мира как великий праздник русской культуры. Пророческими были слова Белинского: «И уже недалеко то время, когда имя его в литературе делается народным именем и гармонические звуки его поэзии будут слышимы в повседневном разговоре толпы, между толками ее о житейских заботах...»

Поэтическое наследие Лермонтова принадлежит к вечно живущим явлениям всемирной поэтической культуры; оно помогало народам в их борьбе против зла и насилия, обогащало их духовную культуру. Поэзия Лермонтова близка и понятна всем народам потому, что после Пушкина, лучше, чем у кого-либо, эта поэзия воплотила в себе самые благородные черты русской литературы.

Поэзия Лермонтова дорога и близка всем народам Кавказа. Недавно Ованес Туманян назвал Лермонтова приемным сыном Кавказа. В поэзии гениального русского поэта нашла отражение не только природа этого края, но и быт и нравы, свободолюбие и героизм кавказских народов. Велико было влияние лермонтовской поэзии на армянскую литературу. Об этом писали Смбат Шахазиз, Александр Цатурян, Ованес Туманян, Аветик Исаакян и другие. Первые армянские переводы из сочинений Лермонтова относятся к 1843 году.

Особый интерес представляет вопрос связей Лермонтова с кавказцами, в том числе с представителями армянского народа. Еще с детства Лермонтов дружил и общался с ними (художник Меликян, семьи Хастатовых, Ахвердовых и другие).